Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5
45

II Գրակ

138

ԱԴԱ ՆԵԳՐԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Թարգմ. Ց. Ցակոբեան

1904
Տպարան ՀԱՅՐԱՊԱՏԻ

85-1
Ն-45

Ա.Շ.

19 NOV 2010

138

ԱԴԱ ՆԵԳՐԻ

85
5-45
Ա8.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Թարգմանեց

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ

357941

Բ. ԳՐԱԿ

(Բանաստեղծուհու նոր պատկերով)

ՀԲ-3

ԹԻՖԼԻՍ
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Մադաթեան փողոց № 15
1904

(51)

10 JUL 2013
8140
31 MAY 2008
№138

№ 138

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՅՈՒՂԱԲԵՐ

ՍԵՐՈԲՅԱՆ-ԻՆՃԻԿՅԱՆԻ

Ի՛ 23-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1929 Թ. ԹԻՖԼԻՍ

Дозволено Цензурою. Тифлисъ, 2-го Сентября 1904 года.

№ 138

Ada negri

№ 138

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻԼԶԱՐԵՐ
ՍԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒՆ

ՈՂՋՈՒՅՆ ՁԵԶ

Salvete

Ողջունո՞ւմ եմ ձեզ, ով ժիր գութանի չարքաշ հերոսներ,
Որ թէ որոտի, թէ տապ արևի ճաճանչների տակ
Ոյժով խլում էք ագահ, կոշտ հողից
Ձեր հացն ու վաստակ։

Ողջունո՞ւմ եմ ձեզ, ով աշխատանքի անխոնջ հսկաներ,
Որ գիշեր ցերեկ հաղիւ շնչելով լեռնահանքերում,
Քլունգ էք մխում խաւար, անիծեալ
Հողի շերտերում։

Ցանկարծ չարագուժ ջրի վշշոցը լուեց մօտիկից,
Վայրկեան—և ահա կամարը անյաղթ տապալուեց ուժգին,
Զոհի դիակն է լողում անդընդում,
Ողբում անմեկին։

Բայց և՛ ճեղքված է ու բացված կուրծքը յամառ, լերկ սալի
Եւ շոգեկաթսան վազում է միջով յաղթական անցքով,
Եւ արշալուսին դիմաւորում է
Ողջագուրանքով։

Ողջո՛ւն ձեզ, ողջո՛ւն, հոյակապ խելքի, մտքի ասպետներ,
Թշուառ ամբոխի դուք նահատակներ, ուղեցոյց աստղեր,
Որ շարիքի դէմ միշտ կոչ էք անում
Անվերջ մարտ մղել։

Ողջո՛ւն և նոցա, որոնք տոգորուած ազնիւ վաստակով,
Հալւում են, մաշւում հանգիստ չիմացող անյայտութեան մէջ.
Ձեզ, «ոգով արի» ցրւած եղբայրներ, սրտով դողդոջուն
Օրհնանք և ողջոյն։

* * *

Ողջունո՛ւմ եմ ձեզ, երկաթի կրծքեր,
Որ մինչև դագաղ անընդհատ գործում
Ու չէք էլ յոգնում խուլ ժխորի մէջ—
Արհեստանոցում։

Ողջո՛ւն և նոցա, որոնք գտնում են
Միակ սփոփանք աշխատելու մէջ.
Զութի, քըլունգի, մտքի զինուորներ,
Ձեզ ողջո՛ւն անվերջ։

Տեսնում եմ ահա՝ վաստակաւորներ,
Նիրհում են յոգնած, քնով կախարդուած՝
Անթիւ նաւերի ցրւած կմախքներ,
Ալիքից ջարդուած։

Բոկոտն մանուկներ, ծերուկ ճակատներ,
Սովալըլուկներ ու հաշմանդամներ,
Թոքախտաւորներ, գունատ, վշտահար
Քայլում են յամառ։

Նրանց ձայները լսում եմ հեռուից,
Նրանց ճանաչում ծանօթ բառերից.
Նրանց աղմուկով—որ մօտ է սրտիս—
Հրճւում է հոգիս։

Ո՛վ աշխատանքի անպարտ հերոսներ,
Ես ձեզ եմ երգում, ձեր սերտ միութեամբ
Ընդ միշտ եղէք մեծ, կուտեցէք քաջ-քաջ—
Կեանքըն է շատ կարճ։

Օրհնւած վաստակի մայր-անդաստանին,
Կանգուն թէ ընկած նահատակներին
Կփայլին անմահ աստղեր, արեգակ,
Որպէս Աստուծոյ աչալուրջ հայեացք։

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՀԱՄԲՈՅՐ

II

Bacio pagano

Արևի տակ վարած արտում հաճարի,
Ատուածային կարծես մէջը տաճարի
Նա հրպել էր նրա կրքոտ շուրթերին,
Եւ ծծում էր խանդոտ համբոյր նորանից,
Որպէս ծարաւը պաղ ջրին։

Նրանց սիրով հրճւում էին դաշտերը,
Նրանց սիրոյն ժպտում էր ծով-եթերը,
Աղատ դաշտում առողջ, անկեղծ համբոյրին
Ուրախ էին և երկինքը, և արփին։

Ծաղիկներն էլ ասես շրթունք համբոյրի,
Բացել էին իրենց կոկոն թերթերը,
Որ շշուկով ախորժալուր, բուրալի
Զոյեն, դիւթեն նրանց յուզած սրտերը։

Քրքրջալով նոքա իրար գրկում են
Ակօսներում ջերմ արևից տաքացած.
Յանկարծ ձայնը ծիծեռնակի լսում են,
Որ երգում է իրենց կողքով սլացած։

Եւ ամեն տեղ՝ թփերի թէ խոտերի,
Վտակի մօտ, թէ խնկաբոյր արտերի,
Ջերմ համբոյրի լսւում է զիլ հնչիւնը
Ջահէլների—
Ու հասցնում արձագանքը զմայլած ծով-եթերին։

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Storia brevia

Զքնաղ, հիասքանչ, որպէս ցնորքը թախծոտ պօէտի,
Թեթև, օդային, իրա կուսական ճերմակ զգեստում,
Նա նմանում էր համբ սֆինքսին մեծ անապատի։

Թաւիշ վարսերը թափւած ուսերին ալիքածածան
Համբուրում էին ու շոյում նորա մարմինը փարթամ.
Նորա ծիծաղը սիրոյ դիցուհու երգին էր նման։

Ու սիրում էր նա զաղանի ջերմ սիրով մունջ սիրահարի,
Եւ անպատասխան ու համբ սիրոյ կրակն անզուսպ
Մի օր դուրս ժայթքեց նորա կոյս-կրծքից, որպէս մի զերի։

Եւ հաղց...հաղց...ու մոսյլ մի օր թաց հոկտեմբերեան
Խոնաւ շիրիմը բացաւ իր բերան, կլանեց նորան...
—Այդպէս է մեռնում առանց արևի չքնաղ վերբենան։ *)

*) verbena-ծաղիկ

ՁԻՒՆԸ

Nevicata

Լայնածաւալ այն դաշտերում,
Մութ կիրճերում, շաւիղներում,
Լուռ, հնագանդ, համբ, թեթև
Ձիւնն է մաղում։

Զարաճճին խաղ ու պարով
Կամարի տակ պտոյտ գալով,
Իջնում է ցած փափուկ ու ձոյլ,
Ինչպէս բմբուլ։

Հաղար մի ձև է ընդունում
Կտուրներին ու ցանկերին,
Եւ ծառերին ու սարերին
Հանգստանում։

Եւ ամեն ինչ անդորրութեան
Գրկի մէջ է նա պարփակում,

Ողջ աշխարհը մոռացութեան
Է ենթարկում։

Միայն խաղաղ այդ ժամերին
Իր անցեալն է սիրտը յիշում,
Եւ յուսախաբ սիրոյ մասին
Խորհում, մաշւում...

ԲԱՋՈՒԿԸ

Mano

Ճըշում են հա՜ անիւները ու պըտըտւում փոկերը,
Եւ համերաշխ բանւորների լուում են զիլ երգերը։
Ամենուրեք իրարանցում, շշուկ, աղմուկ անընդհատ...
Յանկարծ այդ խուլ աղմուկի մէջ պայթեց մի ճիչ յուսահատ,
Կարծես այստեղ մահացու վէրք առաւ վայրի մի գազան
Ու կատաղի մռնչոցով լռեցրեց ողջ գործարան։

Թշո՜ւառ, արդեօք, կարող էիր երբեւիցէ գուշակել,
Որ հաց տւող բազուկդ յաղթ չար մեքենան կտրկէր։
Տեսէք, տեսէք, օ՜, այն ի՞նչ է նրա ուսից բաժանւած...
Ճըշում են հա՜ անիւները, պըտըտւում են փոկերը,
Բայց համերաշխ բանւորների աղմուկն է դադարած,
Ու լռել են, էլ չեն հնչում նրանց ուրախ երգերը։

Եւ արցունքը գլորւելով խառնւում է քրտինքին,
Էս սև օրը ո՞չ առաջին, ո՞չ կլինի և վերջին։
Մօթորները հա՜ ողբում են պատահարը սև օրւան,
Ու գործում են նախկին թափով անցքը տալով մոռացման։
Միայն ես եմ, օ՜, Արարիչ, որ աչքերիս առաջից
Չի հեռանում այն բազուկը, այնպէս սպիտակ, արնալից...

ԹՈ՛ՅԼ ՏՈՒՔ ՄԱՆԿԱՆՑ ԳԱԼ ԱՌ ԻՍ

Sinite parvulos

Եթէ պատահէք խուլ փողոցներում,
Կամ աղմկայոյզ լայն շուկաներում,
Մոլար հայեացքով կայտառ մանուկին,
Որ թափառում է մենակ, տրտմագին.

Զուրկ խրատներից, մօր գգւանքներից,
Դառն արտասուելիս թարմ շիրմի վրայ,
Որը չէ վանել դեռ մանուկ սրտից
Մօր յիշատակը ու սէրը նորա,

Բերէք դուք ինձ մօտ այդպէս բոկոտին,
Թող նա հարազատ լինի իմ որդին։

Ես չեմ բաժանուիլ երբէք նորանից,
Քնելիս նորան աղօթք կկարդամ,
Այն սուրբ աղօթքը, որ մանկութիւնից
Սիրել եմ ինքս կրկնել ամեն ժամ։

Սիրոյ վեհ խօսքը, մխիթարութեան
Ես կներշնչեմ, կաւանդեմ նորան,
Անվերջ խնամքով քնքուշ մայրական
Դաստիարակեմ, կկրթեմ նորան։

Կասեմ՝ կեանքըն է անդուլ աշխատանք,
Կասեմ՝ ներման մէջ է խաղաղ ոգին.
Եւ մանուկ սրտում բարոյ, ճշմարտի
Դաստիարակեմ ես գոհարներ անգին։

Աստուծոյ տուած ոյժ ու շնորհքս
Նորա խելքի մէջ կաշխատեմ վառել,
Նրան կեանք տալով՝ ինձ կմոռանամ,
Եւ օրըստօրէ կսկսեմ թառամել։

Երբ կծերանամ, մահս էլ մօտիկ—
Նա կամաց-կամաց կամրանայ, կաճի,
Կձգտի՝ ոգով—սուրբ իդէալին,
Ձեռքով—վաստակին, սրտով—Արարչին։

Ու կերթայ վստահ դէմ արշալոյսին,
Որպէս հրեշտակը ձգտող փայլ լոյսին,
Որպէս դալար շիւղ փարթամ, ծաղկալից,
Որ փայփայւում է գարնան արևից։

Եւ այն ժամ միայն խաղաղ կմեռնիմ,
Զգալով, որ կեանքս չանցաւ անպտուղ,
Եւ իմ դագաղը խոնարհած չիրիմ,
Լացով թաց կանի որդիս նոր-ընձիւղ։

ՄԵՌԵԽՈՒՂ

Nebbie

Տխուր... տրտում... հովիտներում
Մառախուղն է բարձրանում.
Եւ խեղդելով դաշտ ու գիւղեր—
Թանձրանում։

Եւ ագռաւը ծանր թռչում,
Իր ղա՜-ղա՜-ն է կռանչում.
Տխուր... կարծես, «գերեզման» է
Նա կանչում։

Սօսիները ճռնչալով,
Քամուն ուղղած ճղներով,
Գութ են հայցում, գութ ակերսում
Ճօճելով։

1008
35794

Ցուրտ է և ես տխուր, մենակ,
Երկնքիցը դժնդակ
Մեռածների լսում եմ կոչ.
«—Ե՛կ զնանք»։

Ե՛ւ կանչում են փաղաքշարար,
Ե՛ւ կրկնում են անդադար.
«Դէ՛, շտապիր, հեռո՛ւ է մեր
Ճանապարհ...»։

ՀՐԴԵՀ ՀԱՆՔԵՐՈՒՄ

L'incendia della miniera

Հազար կանգունի խորութեամբ ձգած
Սև-մութ բերանով հանքն է ընկած։
Նրա անցքերում անձուկ շերտերի,
Որպէս սև վոհմակ ուրուականների,
Վխտում են, շարժւում հանքափորները՝
Ճատ վաղուց սովոր բանդ ու խաւարի։

Թւով հինգ հարիւր նոքա ամենքն էլ
Ունեն թոկ, քլունգ, լապտեր, գործիքներ.
Դժբաղդ հերոսներ. նոքա ժայռի հետ
Կրծքով են կռւում, բացում արահետ.
Նոքա քաջառողջ, ջահել, անձնուէր
Բանում են, ինչպէս կայտառ զինուորներ։

Փորելով հողը տոկուն արիութեամբ,
Նոքա վարժւել են դիմացկանութեան.
Այժմ հարազատ այդ թարմ ոյժերը
Եկել են փշրել պողպատ լեռները,
Որ խորտակելով լերկ ու անտառը
Կուրծքը ժայռերի—զնան դէպի խոր։

Ութ ճիւղեայ կեռը ժայռին են ցցում,
Զանգռում, յօշոտում, չեն խղճում նոքան,
Կրծում են հողը, արագ մագլցում,
Հանգիստ չեն առնում գոնէ մի վայրկեան.
Եւ մօտ է ահա վրէժի ըսպէն...
Ժայռի տնքոցը լսւեց անդընդէն...

Ու մի ակնթարթ՝ պայթեց լապտերը,
Ահեղ ճայթիւնով հանքը որոտաց,
Զառաչող գազի բոց-ալիքները
Ցայտում են հրեղէն լեզուներ հանած.
Դժոխք է ժայթքում բացւած ճեղքերից,
Զկայ փրկութիւն՝ էլ յոյս մի տեղից։

Փայտէ կամարներն ճարճատումներով
Փլչում-ընկնում են խոր հորերի մէջ.
Բովերի խորքում մարդկանց թաղելով,
Սողում է խեղդող կրակը անչէջ,
Մահացու փայլով սողում է, անցնում
Եւ օձի նման հեռուն տարածւում։

Եւ ագահաբար կրակի բոցը
Վառել է հանքը, ինչպէս հնոցը,
Փլչում են այրւած հաստ գերանները
Ու իրար խառնում մարդկանց ձայները.
Խոր նկուղներից լսւում է ահա
Անասունների բառաչիւնները։

Բոցի հոսանքը բեկւած ճեղքերից
Դժոխք է բացել բանւորին ընդդէմ,
Բայց դեռ կռւում է կեանքը մահւան դէմ.
Եւ ընդդարար ամեն մի բանից
Կախւում է ամրոխն, կամ փախչում ահից,
Օգնութիւն հայցում փայտից ու քարից։

Որպէս սև դեղը եռուն հորերում
Զուտով վառ ածուխ նոքա կդառնան,
Բայց դեռ ահարեկ այրւած շորերում
Վազում են կատղած գազանի նման.
Նրանց աչքերը ահա արնալից
Դուրս պիտի ժայթքեն կարծես կոպերից։

Մի տեղ սարսափով դէպ վեր են սողում,
Այլ տեղ խեղդւում են ծխի հեղեղում,
Ե՛ւ օդ են բռռում, և՛ արև, երկինք,
Եւ՛ լոյս են ցնորում, և՛ գոռ փոթորիկ,
Մի շնչին շարժում—ընութեան յուզում,
Որ ազատ շնչել, ապրել է ուզում։

Օ՜, սարսուկի կեանք, թշւառ ժողովուրդ,
Դու, որ տոկում ես ծխով լի հանքում,
Անթափանց, մթին, կարծես դժոխքում,
Դու, որ օր-գիշեր կեանքդ քարշ տալով
Դժբաղդ կոյրի պէս արև չես տեսնում,
Այդպէս ես արդեօք կեանքը հասկանում.
Սարսափելի՜ է...

Եւ սակայն նոքա այս կեանքն են ուզում,
Բուռն ձգտումով դէպի նա վազում,
Ցախուռն տենչով լցուած հոգսերով,
Քարերն են բերում արնոտ ձեռքերով,
Պատերն են լիզում, օ՜դ են ագերսում,
Օդի փոխարէն ծուխ, մուր են ծծում։

Իսկ ժամանակը նորից ու նորից
Զոհերը է ուզում աշխատաւորից.
Հողն է տաքացել եռուն արիւնով,
Ընկնում է ողջը շռինդ հանելով,
Եւ ամենուրեք մահ ու փլատակ...
Շարժւում են մարդիկ այրող մոխրի տակ։

Կատաղի բոցը հիւանդոտ ջանքով
Նորից ոռնում է վայրի քրքիջով,
Միմեանց դէմ հանում վրէժն ու մահը,
Ու ծաղրում դժբաղդ այս պատահարը,
Վերջապէս հանգաւ բոցը ոխերիմ,
Հանքը դարձել է մի հսկայ շիրիմ...

... Լռեց ամեն ինչ ...
Վաղը կհանեն մութ խոռոչներից՝
Լաց ու բողոքի աղաղակներով,
Սիրտը քրքրող հեծկլտանքներով,
Զոհերի տձև, սև դիակները,
Այլանդակ նոցա մեղկ աճիւնները։

Այրուած ու մեռած նրանց շուրթերին
Կսեղմեն ջահել, կենդանի շուրթեր
Լացը աչքերին, կսկիծ սրտերին
Դժբաղդ զոհերի կթրջեն դէմքերն.
Եւ կմրմնջան անկապ, երերուն,
Որպէս հիւանդը զառանցանքներում։

ՄԵՐՈՐԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՎԻՆ

Ցեռոյ կոյտերով սայլերին բարձած՝
Գերեզմանատուն նրանց կտանեն.
Կին ու տղամարդ սգազգեստ հագած՝
Ամբողջ քաղաքը սուգի կհանեն.
Ասա ընդհանուր մի խորունկ փոսում
Կթաղեն նոցա... Կատն մոռացում։

Եւ այդ մոռացած գերեզմաններին,
Նոցա տակ յոգնած, թշուառ զոհերին
Կյիշեն միայն սիրուն ծաղիկներ.
Նրանց հիւթերից նոր սնունդ առած
Արևի շնչով սնուած, փայփայած
Կծաղկեն շուշան, վարդ ու մեխակներ։

Թրթռուն խումբը բիւր բզէզների,
Որ ընտանիքով կանաչների մէջ
Խայտում են անհոգ, թրթռում անվերջ,
Նորից կեանք կտան համբ թումբերին.
Եւ մեռած կեանքը ազատ ալիքով
Նորից կծփայ ուրախ հոսանքով։

Բայց այն զոհերի որբ զաւակները
Արդէն մեծացած սարկութեան մէջ,
Կրած զրկանքներ, գլխակոր ու խեղճ
Կդիմեն նորից դէպի հանքերը,
Սև հացի համար կտոկան անվերջ,
Որպէս և իրենց թշուառ հայրերը։

Մէկ-մէկու յետքից, շարեշար, սրտում
Նոքա կդիմեն մթին հանքերին,
Գուցէ հնացած խարխուլ շերտերում
Ցանկարծ հանդիպեն իրենց հայրերին—
Ու իրար տալով հողի կոյտերը,
Ճանաչեն նրանց սև կմախքները։

Օ՜, մարդկայի՜ն ցեղ, օ՜, կո՜յր ու թշուա՜ռ,
Սողալուն սովոր, սերմնդ մարդկային,
Եթէ վեհ խօսքը, փորձը փրկարար
Անզօր են այլևս մեզի, սարկային
Աղատել անարդ քո շղթաներից—
Լաւ է գերեզման մտնես այս օրից։

Կեցցէ՛ կրակը, որ աւերում է,
Ջնջում աշխարհից չարիքը կեանքի—
Որ հալածելով իր հետ տանում է
Տաղնապը քաղցի ու տառապանքի.
Որ անյայտութեան մատնելով մարմնին,
Հանգիստ է բերում լքման զոհերին։

Կեցցէ՛ կրակը, որ վրդովում է
Հանգիստը անհոգ բաղդաւորների,
Արցունքի միջից որ չչնջում է
Նրանց ականջին խիստ սպառնալի.
«Ելիր, մեծատուն, ու թող ծուլութիւն,
Մեղկ հաճոյքներդ ու մեռելութիւն»։

«Ելիր չտապով ու մերկ ճակատով
Խոնարհուիր այս թաց խոնաւ հողերին,
Ընկիր ծնկաչոք առ ու երկիւղով,
Լիզիր քարերը մոռցած թումբերին.
Այստեղ հրդեհում նահատակ դարձած՝
Հացի համար քո եղբայրն է ընկած»։

ԻՆՉՈՒ

Perche

I

Քսան տարեկան հաղիւ նա լինի ու սիրում է ինձ
Գժւածի նման. գեղեցիկ է նա, ու երբ խօսում է
Սիրոյ անունից—ասես երգում է նւագ հեշտալից.
Ու երբ երգում է—ծաղիկ է բուրում կարծես շուրթերից։
Թեթեւասլաց նրա էջերում խանդաւառ երգի
Հնչում են սիրոյ հոգեմայլ շեշտեր վշտի, բերկրանքի,
Նա ինձ մօտեցաւ հլու, հնազանդ սիրուց կախարդւած՝
Մանուկի նման դողդոջուն ձեռքերն դէպ ինձ կարկառած.
Ու շշնջում է ոտքերս ընկած, խնդրում մոլեգին.
«Իմ կեանքը ջահել՝ թող մատաղ լինի ոտերիդ տակին.
Զոհում եմ ահա փառքս վաստակած քո մի համբոյրին,
Քո վառ ժպիտին, քո մի բարեհաճ քաղցր հայեացքին...»
Ու ողջ ունեցածն ինձ է նուիրում,
Բայց սիրել նորան ես չեմ կարենում։

II

Միւսը յաղթանդամ, ճակատը պարզած հպարտ ու պայծառ,
Որպէս փոթորկից երկիւղ չկրող հսկայ կաղնի ծառ
Կանգնել է լռիկ... ոչ բաղդ է հայցում և՛ ոչ հառաչում,
Սակայն իր կրծքում բանաստեղծական աւիւնն է հնչում.
Ու երբ պատահմամբ նրա հայեացքը յանկարծ որսում եմ,
Որը կայծում է կերոնի նման, այդ ժամ տեսնում եմ
Թէ ինչպէս սիրոյ կրակն անդուսպ ցայտեց աչքերից,
Թէև իր սէրը որպէս խոր գաղտնիք նա ցոյց չէ տալիս։
Բայց երեկոյեան, երբ արեգակը հանգչում է, մարում,
Տեսնում եմ, ինչպէս մութ լուսամուտից նա ինձ է նայում.
Նայում է թագուն, նայում մէջ-ընդ-մէջ, կրքով ամօթխած՝
Ու սիրոյ մասին դարձեալ ակնարկել չի վստահանում...
Այդ ժամ արբեցած նրա կոյս սիրով ու յաղթահարւած՝
Աչքերս կամայ ցած եմ խոնարհում, բայց սիրտս յուզւած
Մի գաղտնի ոյժով նոցից հրում է ինձ նրա գիրկը—
Ու տարւում եմ ես, որպէս հրապուրւած անմեղ թռչնիկը։

ՄԻՆՉԻ ՄԸՀ ԵՒ ՑԵՏՈՑ

Fin ch'io viva e più in lá

Ինձ նախատում են՝
—Ինչո՞ւ չես ժպտում ուրախ ու անհոգ,
Ինչո՞ւ քնարդ հնչում է միայն հառաչ ու բողոք.
Դուցէ նւազը սիրոյ, համբոյրի անծանօթ է քեզ,
Երգը կենսունակ չքնաղ ընութեան մի՞թէ չգիտես։

Այն ի՞նչ ոգի է, որ հետևում է քեզ օրօրոցից,
Որ վիճակել է անհամբոյր, սև բաղդ մանուկ հասակից.
Դէ՛, պատասխանի՛ր, բանաստեղծուհի՛, առնական ոգով,
Դու ո՞ւր ծնուեցիր, ինչո՞ւ դժգոհ ես ներկայ վիճակով։

—Այնտեղ ուր մարդիկ խեղճ են ու տգէտ,
Ուր կեղտ ու մուրն է տիրում մշտակայ,
Ուր վիշտ ու հոգսի հոսում է սև գետ՝
Այնտեղ՝ նրանց մէջ ես աշխարհ եկայ։

Եւ ալ հեղեղով դէպ սիրտս հոսաց
Անմեղ արիւնը այն հերոսների,
Որոնք կուելով բռնութեան դիմաց
Զգաել են ազատ իդէալների։

Տեսնում եմ ահա՝ ինչպէս այն հիւղից
Դուրս ընկաւ գունատ բանուորը քաղցած,
Եւ ագահաբար, կատաղած սովից,
Յարձակուեց հացին՝ արնով շաղաղուած։

Տեսնում եմ մռայլ կամարների տակ գործարանների,
Ուր սուր աղմուկով ճչում են, սուլում բիւր ճախարակներ,
Անթիւ վշտահար թոքեր են մաշւում գործաւորների,
Թունաւոր օդից թառամում կանայք ծաղիկ հասակում։

Տեսնում եմ ահա՝ ճահճոտ անպտուղ, ագարակներից,
Որպէս ժանդ դահիճ սողում է մէգը գոլորշիների,
Թշւառ ամբոխի ապաստան գտած այն շիրիմներից
Լսում եմ հառաչ, արցունք ու բողոք տանջուած սրտերի։

Ա՜խ, այդ անթափանց մէգը ատելի
Ծածկում է ինձնից դէմքեր սիրելի,
Եւ իմ մարտնչող սիրավառ կրծքում
Փաղաքշանքի տեղ վիշտն է սրքում...

Բայց այդ այն վիշտն է որ հպարտ, յամառ արհամարհելով
Հոգսուտառապանք, ձգտումէլերանց ձիւնեայ բարձրութեան.
Նա ջերմացած է երկնառաք կայծով, պրոմեթեան հրով,
Ու ապաւինած վէս գեղեցիկին և ճշմարտութեան։

Եւ թող ուրեմն իմ հնչիւն երգը սաւառնի մռայլ
Ամբոխի գլխով, որպէս կոչնատու արծիւ վիրաւոր.
Թող որ ամբոխը յաղթական ոգով ձգտի ձիւնափայլ
Այն վեհ սարերին, խրոխտ երգերիս ականջ դնելով։

ՈՒՐՒԱԿԱՆՆԵՐ

Apparizzione

Ես նայում էի՝ ինչպէս ալիքներն փշրւում էին
Ապառաժներին. և թւում էր թէ ջրահեղձների
Ուրվականները նորից զարնւելով ջրի լեռներին,
Յաղթահարւելով նենգ հոսանքներից, կլանւում էին։

Ծովախոտերով նոքա փաթաթւած՝
Ջուր էր կաթկաթում նրանց մազերից,
Մոլար հայացքով սառած, գունատւած
Գութ էին հայցում ոլորտումներից։

Նորանց բերանից թափւում էր աւազ,
Փրփուր շրթունքից անէծք ու հառաչ.
Նրանց անքոցին՝ որպէս մի յովազ,
Արձագանքում էր ծովը չարատանջ։

Դիակներն էին ջրահեղձների,
Զոհեր մաքառման, անմեռ վշտերի,
Զարգացածների, ինքնասպանների,
Նաւավարների ու ճանապարհների։

Ու դիակները ինձ հարց են տալիս՝
«Ի՞նչ է կատարւում մարդկանց աշխարհում,
Այստեղ տանջւում են».
Պատասխանում եմ.

—Մեղ մօտ խեղդւում են
Ոխ ու չարիքից... երանելինե՛ր,
Նոքա չեն կարող, ո՛չ ձեզ վարակել,
Ո՛չ ձեր հանգիստը ճնշել, խորտակել։

Լսում եմ՝ —«Իջիր, ուրեմն, մեղ մօտ,
Այստեղ խոտերը կուրծք են զարդարում
Եւ ալիքները մինչի առաւօտ
Սիրերգ նւագում...—երջանիկ է նա,
Ո՛վ որ չի ապրում մարդկանց աշխարհում».

Դէ, շուտով իջիր,
Ու ազատ շնչիր...

Ես նայում էի՝ ինչպէս ալիքներն փշրւում էին
Ապառաժներին. և թւում էր թէ ջրահեղձների
Ուրւականները նորից դարնւելով ջրի լեռներին՝
Յաղթահարւելով նենգ հոսանքներից, կլանւում էին։

ՓՈԹՈՐԻԿՆԵՐ

Tempeste

Խիտ անտառի արանքներով
Հողմերն են սլանում,
Իրենց յետքից հառաչանքով
Հսկայ կաղնիք տապալում։

Ու թռչում են դէպի երկինք,
Սև ամպերը վրդովում,
Ամպի սարեր իրար տալով,
Ահեղ մարտի հրաւիրում։

Խիտ անտառի արանքներով
Հողմերն են սլանում։

Խիտ անտառի արանքներով
Ձարքերն են սլանում,
Ողջ անտառը աղմկելով,
Ոտքի հանում ու ծաղրում։

Տիեզերքը սարսռում է
Ու գալարում տարերքից.
Տիեզերքը ճիչ է հանում
Սարսափահար իր կրծքից՝
—«Վիճակ է մեզ երկնքից»։

Տիեզերքը ճիչ է հանում
Սարսափահար իր կրծքից։

Ու պատմում են այն հողմերը
Տարօրինակ հէքեաթներ,
Ճրչնչում են չար հողմերը
Գաղտնի տխուր, շատ բաներ.

Եւ մեղսալի սիրոյ մասին,
Արտասուախառն հոգսերի,
Եւ նոր ու հին յանցանքների,
Անհաշտաղաղ զոհերի։

Ու պատմում են այն հողմերը
Սարսափելի հէքեաթներ։

Օ՜, ոգիներ, չար ոգիներ,
Աղաչում եմ ու խնդրում,
Ինձ էլ տարէք դէպի եթեր
Ձեր սրարշաւ թեւերում։

Տարէք՝ թռչեմ դէպի հեռու
Անհեղգոչ ամպերը,
Դէպի չանթող կայծակների
Կրակալից աշխարհը։

Տարէք՝ սահեմ, ինչպէս գետը,
Ծաղկից պոկած թերթերը,
Տարէք մինչ որ անհետանամ
Ու ինձ կուլ տայ եթերը...

ՄԱՆՈՒՇԱԿ

Wiolette

Տխմնում ես ինչպէս մանուշակը լուռ
Պճնուած փարթամ իր զարդարանքով
Նայում է դէմքիս թախծալի, տխուր,
Նայում ամօթխած ու աղերսանքով։

Ա՜խ, կար ժամանակ, երբ սիրում էի
Մի զոյգ սև աչեր նոյնքան թախծալի,
Սիրող ու քնքուշ. բայց նոքա մեռան
Եւ մատաղ սէրս իրենց հետ տարան։

Բայց եթէ ճիշտ է, որ մեռելները
Գաղտուկ հրաշքով իրենց հիւթերը
Տալիս են բոյսին, վարդի ցօղունին,
Թուփ ու խոտերին, ծառերի բունին,

Դու, ով մանուշակ, որ տխուր այդպէս
Նայում ես դէմքիս—կաղմում ես անշուշտ
Մանիկը հոգու իմ այն սիրածի,
Որին կլանեց սև հողը անկուշտ...

ՄԻԱՅՆ ՔԵԶ

Te solo

Միայն քո կրծքին, ա՜յ իմ սիրելի,
Ես կհեղեղեմ իմ արցունքները,
Միայն քո գրկում, ա՜յ իմ սիրելի,
Կխօսեն սրտիս համր ցաւերը.
Ա՜խ, թող արտասուեմ, ես լալ եմ ուզում։

Օ՜, ի՜նչպէս կուզեմ կրծքով կուսական
Փարուիլ ու մնալ լանջիդ առնական.
Վախկոտ թռչնիկն եմ փշուր թևերով,
Վաղաբաց վարդը՝ չանթուած թերթերով.
Ա՜խ, տուր ինձ հանգիստ, հանգչել եմ ուզում։

Եւ թող շուրթերս դողդոջուն, յուզուած,
Սեղմեն ճակատիդ, դրոշմեն համբոյր.
Եւ միայն մի խօսք չընչան այրուած,
Մի խօսք, որ կեանքին տալիս է հրապոյր.
Ա՛խ, սէր եմ ուզում, սիրուել եմ ուզում։

ԲԱՀԻ ԵՐԳԸ

Canta della Zappa

Բահն եմ կոպիտ, գետինը փորող,
Ե՛ւ բիրտ և՛ հերոս.
Արևին ընկեր, սովին դիմադրող,
Ե՛ւ վիշտ և՛ փարոս։
Սովոր եմ այրող կէսօրեայ տապին,
Բուք ու փոթորկին,
Հեղեղատներին, հողմի տագնապին,
Թուխպ ու կայծակին։
Ծանօթ եմ բոլոր արգաւանդ հողի
Մայիս օրերի,
Բոյսերի շնչին, արտ ու դարդերին
Դանաչ տունկերի։
Որքան աշխատում, այնքան աւելի
Սրւում եմ, փայլում,
Անյողդողդ, հուժկու խրւում եմ գետին,
Ոյժ չեմ խնայում.
Աղտ մուրք ունիմ ադրատ հիւղերում
Եւ խրճիթներում,
Մոռացած, մռայլ, խաւլ նկուղներում
Եւ այն վայրերում,

Ուր բաց ճեղքերից բուրն է հառաչում
Ու քամին սուլում,
Ուր գետնայարկում լի ածխահոտով
Խանձողն է մլլում։
Ուր բոլը դաժան շրջում է ադատ
Ներքնայարկերում,
Ու ապրում որպէս եղբայր հարադատ
Մարդկանց վարակում։
Մրանում եմ այնտեղ ու գաղտուկ նայում,
Թէ ինչպէս մարդիկ
Լուռ խարխափում են անձուկ խաւարում
Ու տանջւում ստատիկ.
Տեսնում եմ՝ ինչպէս ճահճոտ դաշտերում
Տենդն է մաշում,
Մարդիկ ուժասպառ խոպոտ թոքերով
Թառանչ են քաշում։
Ու ես չեմ քնում, վառ արշալուսեան
Զողն եմ երազում,
Խաւարում անքող թշուառ մարդկութեան
Բաղդին սպասում.
Եւ ոգևորւած հուժկու ամրոխի
Ուժով քաջարի
Կոշտահողերից արդէն ադատւած
Հիւրն եմ ցանկալի։
Սպիտակ դրօշը *) նշան անարիւն
Վեհ յաղթանակի
Սիրոյ թեն եկած՝ շարիքն ու ոխը
Պիտի խորտակի։

*) Որպէս էմբլեմա խաղաղութեան.

Բեղմնաւոր հողի բարիքից արբած
Որպէս վարդի բոյր,
Մարդիկ կգրկեն ու կտան իրար
Հաշտութեան համբոյր։
Եւ անա ձայնը փրկուած ամբոխի
Երկինք կթռչի,
Սէր, խաղաղութիւն, ազատ աշխատանք
Երկրին կհանդչի։

ՀՈՂԸ

Terra

Տուր ինձ տափանը, փոցխը, բահն ու թին,
Գարնան արևը թող դէմքս այրի,
Նշա կրակոտ համբոյրի տակին
Քաղցը է կրել բեռը հոգսերի.
Առողջ թևերս ես վեր կքշեմ,
Ջորերս գոտկիս, ծամս կկապեմ,
Թող նուստուերիւն համարեն մարդիկ
Սև աշխատանքը չարքաշ գեղջուկի—
Նա ինձ կրերի և՛ բաղդ և՛ բարիք։
Կուզէի տեսնել ես այստեղ յոգնած
Նիհար ու վատ նաղելի կանանց.
Օ՛, դուք՝ տերևներ, քամուց հալածուած,
Օ, դուք՝ ծաղիկներ, գիշերով ծաղկած,
Մեղսոտ ու հիւանդ ձեր ցնորքներով,
Անգործութիւնից դեղնած այտերով
Դէպի մայր հողը դիմեցէք շուտով։
Վա՜յ նորան, ով որ փախչում է հողից,
Ո՛վ խուսափում է չարքաշ կենցաղից.
Կորսէթ, պահուճանք հանէք, ձգեցէք,
Նրանց ճնշումից կուրծքն է թառամում,
Որպէս ծաղիկը յափրած ջերմոցում,
Մաքուր, թարմ օդին, լոյսին մօտեցէք,

Դէպի մայր հողը Տիրոջ պարգևած։
Տեսէք, քանի կեանք կայ այն հողերում,
Որոնց գուլթանը դեռ չի շօշափած,
Ուր բզէզները ոստում են, վխտում,
Որոնց շերտերին սերմն է կարօտում.
Նրանց արգաւանդ ուժեղ ծալքերից,
Ծառերի ընից ու երակներից
Եռուն, անհամբեր հիւթերն են ծորում,
Որպէս յորդ կաթը ծծմօր ստինքից։
Ջերմ արևի տակ փայլ ճաճանչների,
Առատութիւնն է ուրախ ծածանւում
Ոսկի ցորենի արձակ դաշտերում
Առատութիւնը կանաչ խոտերի.
Հասկերի միջից բաց ճակատներով
Ծաղկունքն են ժպտում հաղած ծիրանի.
Խոնաւ, հեղեղած ագարակներում
Ցանքսերն են շողում թաւիշ զորգերով.
Լայն հովիտներում թարմ ծաղիկների
Թմբիր ներշնչող բոյրն է թանձրանում
Եւ դէպ, ալեոր ամպերն բարձրանում։
Օդի մէջ կարծես տիրում է աշխոյժ,
Մի կեանք թրթռուն, կենսունակ մի ոյժ,
Որ ամեն քարի հողի է շնչում,
Ամեն հիւլէում եռանդը շարժւում,
Եւ արևի տակ պարզ ու բնական
Ընչաւոր, անշունչ սէր է շընչում.
Օ՜, դէպի հողը, դէպի մայր հողը,
Դէպի հինաւուրց մեզ հաց տուողը,
Լարւած ուժերով եկէք շտապենք,
Նրա գրկի մէջ ոյժ ու ճիգ թափենք,

Խլենք նրանից կենսատու բերքեր,
Եւ անուշարոյը ժողովենք հասկեր,
Ու ժպտանք անհոգ, բաղդաւոր ապրենք։
Եւ Մեսոպոտամն ընութեան
Հեղեղ տարածէ թոյլ առատութեան.
Բաց են դռները նրա առաջին
Ե՛ւ չքաւորի և՛ թագաւորի.
Մենք զաւակներ ենք հարուստ ընութեան,
Անխիլ կերպով նա կոչ է անում,
Ամենքիս դէպ՝ իր գիրկը հրաւիրում.
Օ՜, այստեղ եկէք, բաց կամարի տակ—
Այստեղ է կեանքի, լոյսի նպատակ.
Ո՞վ հզօր աղդի հզօր ժողովուրդ,
Մենք բաղուկներով առողջ ու ջլուտ
Ե՛ւ զեղեցիկ ենք և՛ ազնիւ ոգով.
Ազատ օդի մէջ ազատ շնչելով,
Կուրծքն է զարգանում, թոքը լայնանում,
Զաւում է հոգին, միտքը թարմանում,
Ինչպէս երկնքում արևից առաջ
Վառվում են շողերն թարմ արշալուսեան,
Այնպէս էլ կարծես կորչում են տխա՝
Տառապանք ու վիշտ թշւառ մարդկութեան.
Զգում է հոգին, որ էլ չկայ վախ
Ե՛ւ ոչ պատերազմ, ոչ դաշտեր արեան,
Ջուրջդ տիրում է, յոյս ու ազատ կեանք։
Օ՜, դէպի հողը, դէպի սուրբ հողը
Դէպի հինաւուրց մեզ հաց տուողը
Եկէք շտապենք.
Այնտեղ է առողջ կեանքի նպատակ։

ՎԵՐԹՈՒՀԻ

O, bimbi, bimbi, atenti.
Օ՜, մանուկնե՛ր, մանուկնե՛ր, լսեցէ՛ք:

Վարժուհի է նա, ու հեղահամբոյր նրա հայեացքում
Ապրում է ոգին համբերողութեան ու տոկունութեան.
Նա չի սպասում ոչ գովասանքի, ոչ վարձատրութեան:

Անձնուէր սիրով աշխատում է նա հեռու վայրերում,
Ու նրիրելով մանուկ սերնդին ամբողջ էութեամբ՝
Մաշում է կեանքը, հեռանում ձայնին պարտականութեան:

Սառն ու խոնաւ, որպէս գերեզման, իր կացարանում
Կեանքի հրապոյրը փոխարինելով ոգևորութեան,
Ապրում է մենակ կարօտ մնալով բաղդաւորութեան,

Ուր ջահը սիրոյ պատանեկական վառ ցնորքներով
Եւ ոչ մի անգամ չէ փայլել նորան. և ուր դառնութեամբ
Բարի ժպիտը վաստակած դէմքին կմարի շուտով:

Մարած աչքերում կլսուի այն ժամ զարմացքը սառած՝
Դժգոյն շուրթերում կլսուի մրմունջ վերջին վայրկեանի՝
«Մանուկ սերնդին, օ՜, տարէք առաջ...»:

ԸՆԸՆՑ ՑԵՆԳԵՐԻ

Sensa Ritmo

Մռայլ դահլիճի բացած փեղկերից
Ահա ցայտում են նուագի ձայներ՝
Մաշած լարերի այդ հընչիւններն են,
Որ հեկեկում են
Զոր մատների տակ թշուառ Նիչէի.
Եւ դու, դու՝ Նիչէ, ճերմակ զգեստում
Նման երկնային անթափանց ոգու,
Նուագում ես լուռ... Նուագիր, թշուառ,
Գիտեմ որ շուտով պիտի մահանաս.
Կհագաս յանկարծ... ու թաշկինակդ
Արնոտ բծերով բերնիդ կսեղմես,
Իսկ այժմ նստած դաշնակի առաջ
Նուագում ես դու գլխակոր ու լուռ.
Նուագիր, թշուառ, քանի չեմ տեսնում
Երեսդ տխուր.
Քանի չեմ տեսնում լուռ ու ստախտ
Աչքերդ թախծոտ, ուր թաղնուած են
Կարօտը սիրոյ և փայփայանքի,
Եւ ուր անբաժան արցունքն է փայլում,
Արցունքը վախկոտ, սառած, դողդոջուն.

Տեսնում եմ ահա հագուստում ճերմակ
Թաւիշ մազերդ ցրուած ուսերիդ,
Եւ ահա, զգում եմ, որ թրթռում է
Սիրտդ կրծքիդ տակ, բարախում անդադար
Ու ճնշում նուագի ալիքների տակ.
Դու Բեթհովէնն ես նուագում, թշուառ,
Օ՜, երբ հանճարը ստեղծագործեց
Երկնային, դիւթող, ոգեշունչ հիմներ,
Դու և ես, Նիչէ, դեռ չէինք ծնուած,
Սակայն հանճարի ոգին վիթխարի
Մարդիկ դարձուցին արիւն ու մարմին
Եւ տոգորուեցին նրա գործերով.
Այժմ նուագի ձայնը թախծալի
Յուզում, դիւթում է քո և իմ հոգին
Ու պատմում շատ բան առանց խօսքերի...

Նուագիր, թշուառ, այդ նուագներում
Լսում եմ ինչ որ չարագուժ ձայներ.
Լսում եմ՝ ինչպէս մարմնիդ սիրուն
Զուտով կհիւծուի գաղտուկ ու դանդաղ.
Լսում եմ՝ ինչպէս հոսակդ մատաղ
Պիտի մաքառի մահու դէմ ագահ.
Այդ ակորդներում լսում եմ ահա,
Որ դու ամուսին և մայր ես սիրող.
Որ քո նորածին մանուկն չքնաղ
Առաջին անուշ թոթովն է հնչում,
Որ նրա համար այդպէս մաշելով,
Ձգնում ես ապրել, կեանքից կախուելով...
Իսկ ակորդները խուլ ձայն են տալիս,

Որ դու աշխարհից շուտով կանչատաս
Դեռ չյագեցած կեանքի վայելքից...
Իսկ ես, օ՜, Նիչէ, գուցէ դեռ ապրեմ,
Ապրեմ միայնակ, անչատ ու անսէր.
Բայց, ա՜խ, քանի քեզ պիտոյ է ապրել
Ամուսնուդ համար, զաւակիդ համար,
Ապրիր, օ՜, Նիչէ, թող քո փոխարէն
Մեռնեմ ահա՜ ես՝ անտէր ու անսէր։

* * *

Բայց դու յետ նայել անգամ չես ուզում
Ու նաւագում ես անընդհատ ու լուռ...
Նաւագիր, Թշուառ, քանի՜ չեմ տեսնում
Երեսդ տխուր...
Եւ այդ մտախոհ աչքերդ սիրուն,
Ուր թագնուած են կարօտը սիրոյ
Եւ փայփայանքի, ուր կարծես վախկոտ
Արցունքն է փայլում, ընդմիշտ դողդողում։

Ծնկաչոք ընկած, որպէս հողեղէն,
Ես համբուրում եմ ճերմակ զգեստիդ
Երկար ծայրերը, օ՜, Թշուառ Նիչէ,
Որպէս երկնային պայծառ մի ոգու,
Որ վաղը մեզնից պիտի չքանայ...
Իսկ ակորդները հնչում են, հնչում՝
—«Դու, որ աշխարհում դեռ պիտի ապրես,
Դու, որ մարդկութեան սէր ես քարոզում,

Էլ մի յապաղիր, շտապիր օգնել,
Միրել ամենքին, փաղաքշել նորան,
Ով տառապում է մենակ ու անյոյս.
Թէև դու հիւանդ, թոյլ, տկար մի կին,
Գնա, այժ շնչիր մենաւորների,
Թոյլերի սրտին.
Եւ կեանքը այնպէս քաղցր կթուայ,
Որ երբ դիակդ շիրիմ իջեցնեն,
Հոգուդ մէջ փայլող գիտակցութիւնը
Քեզ զգալ կտայ, որ մինչի դադաղ
Կենդանի գործի համար ես ապրել...»։

«Օ՜, սիրիր, չէ՞ որ սէրն է անմահ, մշտնջենական
Եւ վիշտը անմեռ ու հոգսը յաւերժ յաւիտենական»։

ԺԱՌԱՆԳԸ

Սառը, դանաբաց,
Դատարկ խրճիթում
Խաւարն է սողում,
Ուր աղօտ լոյսով
Կիսավառ մոմի
Կրակն է դողում։

Այնտեղ յատակին
Ընկած մի դիակ
Հանգստանում է.
Մի սև ցնցոտի,
Որպէս մահւան քող,
Նորան ծածկում է։

Այդ մեղկ դիակն է
Աշխատաւորի—
Առողջ ու արի,
Բայց մահը նրան
Խլեց վաթանից,
Զրկեց գութանից,

Բերրի դաշտերի
Զմրուտ խոտերից,
Այգու բերքերից,
Արևից յափրած
Անտառի բոյրից,
Ու փայլ աստղերից։

Վշտից քարացած
Անկիւն է քաշւել
Խեղճ կինը ջահել.
Քիչ հեռու՝ կայտառ
Մանկիկն է խաղում,
Ուրախ աղմկում։

Անգիտակ դարդին,
Ցաւ, հոգս ու վշտին,
Կամ դաժան մահին
Խաղում է մենակ,
Միամիտ, անհոգ,
Որպէս մի թռչնակ։

Նա աշխարհ եկաւ
Ցարդի մէջ—զոմում,
Մօր յաւօտ գրկում.
Ծնունդ ամբոխի,
Քեզ ինչ է սպասում
Հոգսի աշխարհում։

Թիակն ու բահը՝
Փայլուն ու սրած,
Գութանը օրհնած,
Կիզող արևը,
Որոտ-անձրևը,
Թէ բուքը սառած։

Ճահճոտ ցանքսերի
Ջերմ ու տենդն անվերջ,
Թէ յոգնածութիւն
Անյուսութեան մէջ.
Զոր, ցամաք սև հաց,
Թէ հիւղն դռնաբաց։

Դեռ վիշտ չգիտես,
Բայց ժամանակը
Սև օր կբերի,
Եւ իր թևերով
Անհուն եթերից
Քեզ վայր կբերի։

Ի՞նչ պիտի լինիս՝
Զինուոր մարդկային
Ընդհարումների,
Զոհ խռովութեանց
Արիւնաթաթախ
Պատերազմների.

Ի՞նչ պիտի լինիս՝
Թոյլ, վտիտ էակ
Զարիքով ծնուած
Խաւարում թմրած,
Տգէտ և սարուկ
Ագցունքով խեղդուած,

Թէ ազատ, խիզախ
Ամբոխի դաւակ,
Հերոս մարտնչող,
Որի վառ սրտում
Ապրում է անահ
Վեհ ազատութիւն։

I

ՄԱՅՐԱԿԱՆ ԲՆԱԶԴ

Istinto materne

Ես զաւակ չունեմ. մոռացութեան մէջ
Կկորչի եռուն իմ մատաղ հասակ.
Անհունձ խոտի մէջ, սառը աղբրի մօտ
Այդպէս է բուրում համեստ մանուշակ։

Օ՜, դու սրբազան, համբոյր մանուկի,
Որ սիրտ ես տալիս անմխիթարին.
Առաջին թոթով—ազօթք հրեշտակի,
Որ մայրն է շնչում մանկան շուրթերին։

Երգում եմ այժը բեղմնաւորութեան,
Որը ծնում է ոգու հիւթերից
Եւ աղբիւր յուսոյ, մխիթարութեան,
Եւ ծաղիկ սիրոյ ասուածանման։

Երգում եմ պայթումն ցաւոց արգանդի —
Այն վսէմ ժամը ծննդականի,
Որ մի ուրիշ կեանք փրկելու համար
Իր կեանքն է դնում զոհի սեղանին...

II

ԾՆՈՒՆԴԸ

Nascita

Ես մտածում եմ՝ նա աշխարհ կգայ
Իմ առողջ, ուժեղ բնութեան խորքից
Եւ իմ մայրական առատ հիւթերից
Փարթամ ու կարող նա կեանք կստանայ։

Եւ նա կիւրացնի ինձնից ամեն բան.
Ե՛ւ միտքս ալաք և՛ սիրտս կրակ,
Առաջ ձգտելու տենչը մշտական,
Ծարաւը կեանքի գաղափարական։

Մեծ մարդ կդառնայ, ինչպէս ուխտեցի,
Ինքս լինել մեծ, բայց այժ չունեցայ.
Եւ այն բարձրութեան նա շուտ կհասնի,
Ուր ես երբեմն հասնել կամեցայ։

Եւ մինչ կենդան եմ, նրա հոգու մէջ
Ես պիտի տեսնեմ փայլը իմ ոգու...
Հարազատ գձեր.., և երբև մի մայր
Երջանկութիւնից պիտ՝ հրճւեմ անվերջ։

III

Ո Ր Դ Ի Ն

Figlio

Մենաւոր բանդի հիւանդանոցում առաջին անգամ
Նա բացաւ անմեղ իր աչուկները պարզ ու մանկական.
Եւ նրա հնչիւն ու կայտառ ճիչը լսեցին բանդի
Խոնաւ պատերը—այդ վկաները վշտի, ամօթի։

Թոյլ թաթիկներով նա պաշտպանւում էր յամառ ուանդօր,
Կարծես զգում էր երկիւղ, նախատինք կամ ամօթն իր մօր.
Եւ ահա կանգնեց խաւար ժպիտով նրան յանդիման
Համբ մի սուէր, ու լայն տարածեց թեները մահւան։

Բայց մայրը որդուն խանդոտ թեւերով իր կրծքին քաշեց,
Քաշեց ու փարուեց և այդպէս մնաց անշարժ, մեկուսի—
Կուրծքը իր կրծքին, շուրթը շուրթերին դողդոջուն սեղմեց։

Իսկ երբ կամարին վառուեց արշալոյս՝փրկութեան սուրբ կոչ,
Մայրական դէմքը, որ խոնարհւել էր մանկան երեսին,
Նման էր ոչ թէ ընկածի դէմքին, այլ մի սուրբ կնոջ։

Վ Ե Ր Ջ Ա Ր Ա Ն

Immortale

Անմահը

Ապրե՞լ եմ ուզում, յաւիտեան ջահել լինե՞լ եմ ուզում,
Ամբողջ աշխարհի բոլոր ծայրերից թռչել եմ ուզում,
Ուզում եմ սիրել, խնդալ, ծիծաղել և հրապոյրը
Ճաշակել կեանքի. ուզում եմ ջահել հասակս գարուն,
Ծծի արևի ճառագայթները, ուզում եմ լինել թեթև, օդային,
Որպէս փետուրը. լինել թարմ, ինչպէս գարնան խոտերը,
Լինել թափանցիկ, որպէս ովկիանի գոռ ալիքները.
Իսկ քեզ, օ, սև՛ մահ, ես քեզ ատում եմ,
Ու գոյութիւնդ ահա հերքում եմ։

* * *

Սիրում եմ անհուն երկինքը կապոյտ, նրա փողփողուն
Լուսատուներով. սիրում եմ հողը, որին արևը
Համբուրելով իր ճառագայթներով, բաշխում է առատ
Պտղաբերութիւն. արգաւանդ հողը, կեանքի այդ հսկայ
Հնոցը վառուած, ուր աշխատանքն է անընդհատ եռում
Եւ ուր յաւիտեան լսում է աղմուկն աշխատաւորի
Եւ խառնիճաղանճ զարկը մուրճերի։

* * *

Յանուն ամենի՝ ինչ որ ծնված է մեր այս աշխարհում,
Ինչ որ ապրում է մայր հողի վրայ յուսով անխափան,
Ով իր գլուխը վեր է ծածանում և քաջ ձգտում է
Իդեալների վեհ իրագործման, որ գիշերային
Անհուն խաւարում փայլում է որպէս ջահը սրբազան,
Յանուն ամենի, որ մաքառում է ու յաղթանակում,
Որը մարում է, նորից բորբոքւում, յանուն այդ քաղցը
Անյագ տենչերի ապրել ու անմահ լինել եմ ուզում։

* * *

Երգում եմ աղաս, ոգեորւած հիմն սուրբ աշխատանքին,
Մարդկութեան առողջ, ուժեղ սերնդին, նրա զգացման
Եւ ստեղծագործ հանճարեղ ոգուն. երգում եմ նոցա,
Որոնք կարօտ են վեհ ճշմարտութեան, որոնք ապրում են
Երջանիկ կեանքի փոխադարձ սիրով. երգում եմ բոլոր
Թշւառ մայրերին՝ թոյլ մանկիկները սեղմած կրծքերին,
Բոլոր հայրերին, որոնք չեն յոգնում, աշխատում են լուռ,
Բոլոր գիւղերն ու քաղաքներին, սար ու ձորերին,
Վարելու կարօտ բերրի դաշտերին, ոսկի ցորենի
Սուրբ հասիկներին ես հիմն եմ երգում։

* * *

Ես հիմն եմ երգում բոլոր զոհերին, որ կլանուել են
Անյայտութեան մէջ, և այն զօրութեան, որ իր կենարար
Ոգով ներշնչման ալէկոծում է մեծ հանճարների

Եռանդը շաղժման ու ընթացք տալիս անարգել թափով
Կեանքի, յուզմունքի անշեղ ուղղութեան, ձայնի, հնչիւնի
Ազատ սլացման. և այդ ամենին և այդ բոլորին
Երգում եմ խիզախ, ոգեորող հիմն պարզ ու բնական,
Որպէս ցորենի հասկերը լրւած, բայց և անպաճոյճ
Ուժեղ ու անկեղծ սիրով տոգորւած։

* * *

Տանջւել ու տոկալ, չէ՞ որ ասել է՝ ապրել ու զգալ...
Նախ վայրկենական ուժաթափութիւն, ապա անողոք
Վայրկեանը անկման, մինչի յատակը անվերջ խորութեան.
Ուր պիտի լսել զուժող թնդիւնը խորունկ անդընդի,
Ուր պիտի միայն լեղի ծծելով ծարաւը մարել,
Ուր պիտի կծկւել ծանր խաչի տակ, հեկեկալ անոյոյս
Եւ անմխիթար ու կրկնել միայն, կրկնել անդադար—
—Ո՛չ, չկայ նշոյլ յոյսի, փրկութեան։

* * *

Տանջւել ու տոկալ... և տեսնել յանկարծ
Մռայլ, անթափանց այդ սոսկ խաւարում ճաճանչը լուսոյ
Ու միանգամից նոր կեանք ստանալ և արեգակի
Եւ լուսոյ համար. ամրանալ ոգով, ու ոգեորւել
Սիրոյ, հաւատի, քաջութեան համար. ջրահեղձի պէս
Քաշել պարանից, որը փրկութեան յոյս է ներշնչում.
Զգալ՝ թէ ինչպէս անարիւն, ցամաք երակներիդ մէջ
Յուզւում է արիւնը կենսունակութեան, վերածնութեան։

* * *

Եւ ով սարսում է կեանքի պայքարից, թող, անհետանայ
Անյայտութեան մէջ, թող վախկոտներին տանի ու խեղդի
Պղտոր ալիքը հսկայ Լեթայի. նա, ով վախում է
Ու յետ է փախչում, ով որ շրջում է որպէս ուրուական,
Ո՛վ որ կանգնած է երկնակամարի ու երկրի միջև
Որպէս տատանուող, երերուն սաւեր, թող անհետանայ,

Կորչի յաւիտեան։

* * *

Բայց մենք, քաջերս, որ հաւատ ունինք մեր կրծքում պահած,
Մենք առաջ կերթանք, քաջամարտ, ազատ, ուժեղ շարքերով,
Մենք առաջ կերթանք լեռնային, անձուկ արահետներով,
Դիմաւորելու վառ արշալոյսին և մեր յանդիման
Պսակուած պէս-պէս գոյն ճաճանչներով ժպտուն արևին.
Եւ մեր դրօշը անշեղ հաւատի այնտեղ կը տնկենք
Եւ յաղթականորէն քաղցրաձայն կերգենք մենք այն ամենին,
Ինչ որ անմահ է, ինչ որ թառամել, մեռնել չգիտէ։

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻԻԴ. ԱԲԵԵՐ
ՍԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒՈՐԻ 1929 ԹՎԻՆ

Յ Ա Ն Կ.

Երես

1) Ողջո՛յն ձեզ 5
2) Հեթանոսական համբոյր 8
3) Համառօտ պատմութիւն 10
4) Ձիւնը 11
5) Բազուկը 13
6) Թոյլ տէր մանկանց 14
7) Մառախուղ 17
8) Հրդեհ հանքերում 19
9) Ինչո՞ւ 26
10) Մինչև մահ և յետոյ 28
11) Ուրուականներ 31
12) Փոթորիկներ 34
13) Մանուշակ 37
14) Միայն քեզ 39
15) Բահի երգը 40
16) Հողը 43
17) Վարժուհի 46
18) Առանց յանգերի 48
19) Ժառանգը 52
20) Մայրական բնազդ 56
21) Ծնունդը 57
22) Որդին 58
23) Անմահը 59

ԼՈՑՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵՒԵԱԼ ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1) Բանաստեղծութիւններ Յակոբ Յակոբեանի . . 30
2) » Աղա Նեգրի ա. պրակ . 30
3) » Աղա Նեգրի բ. պրակ . . 30
4) Սուտը (հոդերան. էտիւդ) Լէօնիդ Անդրէևի 7

Գնել ցանկացողները կարող են դիմել՝
Тифлисъ, Бебутовская ул. домъ № 43 Акопу Акопянъ.

«Ազգային գրադարան»
NL0311149

8140